



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

-- նոյեմբերի 2020 թվականի №--Ա  
քաղ. Երևան

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊՌՈՇՅԱՆ ՓՈՂՈՑԻՑ ՄԻՆՉԵՎ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ  
ՀԱՏՎԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԵՆԱՍՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԳՈՎԱԶԴԻԱՅԻՆ  
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով՝

ա) Երևան քաղաքի Պռոշյան փողոցից մինչև Բարեկամության հրապարակ հատվածում գտնվող հենասյունների վրա տեղադրված գովազդային միջոցների սպառման համակարգերը (այսուհետ՝ Սպառման համակարգեր) էլեկտրական ցանցին միացնելու վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացված՝ «Մարիա Լայթինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Դիմող անձ) 2020 թվականի սեպտեմբերի 18-ի դիմումը,

բ) որ Սպառման համակարգերի միացումն Ընկերության էլեկտրական ցանցին իրականացվում է համաձայն Դիմող անձի դիմումի՝ որպես առանձին սպառման համակարգ և լրացուցիչ ծախսեր չի առաջացնում,

գ) Երևանի քաղաքապետի 2008 թվականի փետրվարի 14-ի №509Ա որոշումը, որի համաձայն՝ թույլատրվում է Դիմող անձին և «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող հենասյունների վրա տեղադրված գովազդային միջոցների համար կնքել համապատասխան պայմանագրեր,

դ) Դիմող անձի և «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված հենասյունների օգտագործման իրավունքի՝ սույն թվականի մարտի 1-ի №ԷԼ-129 պայմանագիրը, որի համաձայն՝ «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող հենասյուններից օգտվելու իրավունք է վերապահվում Դիմող անձին՝ գովազդային միջոցներ տեղադրելու համար,

ե) Ընկերության սույն թվականի նոյեմբերի 17-ի №ԴԳ4264 և Դիմող անձի սույն թվականի նոյեմբերի 20-ի գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս չեն առարկում

Սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Սպառման համակարգերի էլեկտրական ցանցին միացումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 14.4-րդ կետով սահմանված կարգով տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով՝ կանոնների 13.2 կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթի փոխարեն հիմք ընդունելով Դիմող անձի և «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված հենայունների օգտագործման իրավունքի՝ սույն թվականի մարտի 1-ի №ԷԼ-129 պայմանագիրը:
2. Չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը և Դիմող անձին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**